ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N <<ՀՀԿԱ-ՇՀԾՁԲ-15/3-17/14-1>>

ք. Երևան <<29>> մարտի. 2017թ.

«Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը, ի դեմս աշխատակազմի գործերի կառավարիչ Դ. Բեգլարյանի, որը գործում է Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՖԼԵԾ ՄՈՏՈՐՍ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ա. Ասրյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման (ավտոմեքենաների վերանորոգման) ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի (մեկ ամսվա) կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է ոչ ավելի քան 8400000 (ութ միլիոն չորս հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա (հավելված N2) վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան տվյալ 25.12.2017թ.:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով, իսկ սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի աղյուսակ 1-ի 3-րդ և աղյուսակ 2-ի 4-րդ կետերով սահմանված որակի պահանջները խախտելու յուրաքանչյուր դեպքում՝ սույն պայմանագրի տվյալ տարվա համար նախատեսված գումարի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.5 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.7 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.8 Սույն պայմանագիրը կազմված է **31** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.9 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.10 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կառավարության աշխատակազմ	«ՖԼԵՇ ՄՈՏՈՐՍ» ՍՊԸ
ք. Երևան, Կառավարական թ.1 շենք	ք. Երևան, Ռուբինյանց փ. 31
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Արարատ բանկ» ԲԲԸ
Հ/Հ 900011022085	Հ/Հ 1510012745550100
ՀՎՀՀ 02505554	ՀՎՀՀ 00873228
էլ. հասցեն՝ gnumner@gov.am	էլ. հասցեն՝ info@flashmotors.am
	Հեռ. (060)522555, (091)522855
/ Ա. Բեգլարյան /	/ Մ. Ալոյան /
Կ.Տ	Կ.Տ

Հավելված 1
<<29>> մարտի 2017թ. կնքված
N ՀՀԿԱ-ՇՀՇՁԲ-15/3-17/14-1 ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկում

NN	SU-1,SU-2 ծառայությունների և SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	Տրանսպորտային միջոցների մակնիշները/տեսակները/ըստ չափաբաժինների							
		Նիսսան Տիդա	Նիսսան Մաքսիմա	Հյունդայի էլանտրա, Հյունդայի Սոնատա, Հյունդայի H-1	BMW 750LI և 523L	Հյունդայի Tucson	Լեքսուս LX-470, Տոյոտա land cruiser	Կիա OPTIMA, Կիա Սերատո	Ֆոլկսվագեն Պասսատ 2.0 FSI
1	2	3	4	5	6	7	8	9	10
	SU-1 ներառվող ծառայությունների անվանումը	**Գնացուցակ /ՀՀ դրամ/**							
1	Բռնկման համակարգի ստուգում	10	10	10	10	10	10	10	10
2	Սառեցման համակարգի ստուգում	10	10	10	10	10	10	10	10
3	Յուղման համակարգի ստուգում	10	10	10	10	10	10	10	10
4	Արտացման համակարգի ստուգում	10	10	10	10	10	10	10	10
5	Կցորդման համակարգի ստուգում	10	10	10	10	10	10	10	10
6	ՓՏ-ի աշխատանքի ստուգում		10		10				
7	ԱՓՏ-ի աշխատանքի ստուգում	10		10	10	10	10	10	10
8	Կարդանային փոխանցման աշխատանքի ստուգում	10	10	10	10	10	10	10	10
9	Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում					10	10		
10	Առջևի և հետևի կամրջակների աշխատանքի ստուգում	10	10	10	10	10	10	10	10

11	Առջևի և հետևի կախոցների աշխատանքի ստուգում	10	10	10	10	10	10	10	10
12	Արգելակային համակարգի աշխատանքի ստուգում	10	10	10	10	10	10	10	10
13	ABS համակարգի ստուգում	10	10	10	10	10	10	10	10
14	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	3,000	3,000	3,000	3,000	3,000	3,000	3,000	3,000
15	Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում	1,000	1,000	1,000	1,000	1,000	1,000	1,000	1,000
16	Թափքի վիճակի ստուգում	10	10	10	10	10	10	10	10
17	Տարբեր ագրեգատների յուղերի որակի և մակարդակների ստուգում	10	10	10	10	10	10	10	10
	SU-1 ներառվող ծառայությունների անվանումը								
18	Շարժիչի հանում տեղադրում	25,000	35,000	35,000	40,000	40,000	50,000	40,000	30,000
19	Նույնը DOHC (2 բաշխիչ լիսեռ) դեպքում	0	0	0	0	0	0	0	0
20	Նույնը կոնդիցիոների դեպքում	30,000	40,000	35,000	40,000	0	0	0	0
21	Նույնը ԱՓՏ-ի դեպքում	0	0	0	45,000	0	0	0	0
22	Շարժիչի վերականգնում	140,000	200,000	150,000	200,000	150,000	210,000	180,000	140,000
23	Նույնը DOHC դեպքում	0	0	0	0	0	0	0	0
24	Նույնը V6-ի դեպքում	0	0	0	0	0	0	0	0
25	Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում	4,000	6,000	6,000	6,000	5,000	7,000	6,000	6,000
26	Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում	60,000	8,000	10,000	12,000	15,000	15,000	12,000	10,000
27	Նույնը աջի համար (V6)	0	0	0	0	0	0	0	0
28	Նույնը ձախի համար (V6)	0	0	0	0	0	0	0	0
29	Շարժիչի բլոկի գլխիկի հանում և տեղադրում	40,000	30,000	40,000	40,000	40,000	40,000	40,000	40,000
30	Նույնը աջի համար (V6)	0	0	0	0	0	0	0	0

31	Նույնը ձախի համար (V6)	0	0	0	0	0	0	0	0
32	Շարժիչի գլխիկի միջադիրների փոխարինում	42,000	32,000	42,000	42,000	42,000	42,000	42,000	42,000
33	Շարժիչի գլխիկի վերանորոգում	0	0	0	0	0	0	0	0
34	Փականի խցուկի փոխարինում	2,000	2,000	2,000	2,000	2,000	2,000	2,000	2,000
35	Նույնը V6-ի դեպքում	0	0	0	0	0	0	0	0
36	Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում	20,000	20,000	20,000	30,000	30,000	40,000		
37	Նույնը V6-ի ձախի դեպքում	0	0	0	0	0	0	0	0
38	Նույնը V6-ի աջի դեպքում	0	0	0	0	0	0	0	0
39	Նույնը DOHC դեպքում	0	0	0	0	0	0	0	0
40	Բաշխիչ լիսեռի խցուկի փոխարինում	3,000	3,000	3,000	3,000	3,000	3,000	3,000	3,000
41	Հրիչների փոխարինում DOHC	2,000	2,000	2,000	2,000	2,000	2,000	2,000	2,000
42	Նույնը DOHC դեպքում	0	0	0	0	0	0	0	0
43	Ատամնավոր փոկի փոխարինում	[redacted]	30,000	20,000	0	30,000	35,000	[redacted]	20,000
44	Նույնը DOHC դեպքում	0	0	0	0	0	0	0	0
45	Նույնը V6-ի դեպքում	0	0	0	0	0	0	0	0
46	Ծնկաձև լիսեռի առջևի խցուկի փոխարինում	5,000	5,000	5,000	5,000	5,000	5,000	5,000	5,000
47	Նույնը կոնդիցիոների դեպքում	0	0	0	0	0	0	0	0
48	Նույնը DOHC դեպքում	0	0	0	0	0	0	0	0
49	Նույնը կոնդիցիոների դեպքում	0	0	0	0	0	0	0	0
50	Նույնը V6-ի դեպքում	0	0	0	0	0	0	0	0
51	Նույնը կոնդիցիոների դեպքում	0	0	0	0	0	0	0	0
52	Ծնկաձև լիսեռի հետևի խցուկի փոխարինում	30,000	40,000	40,000	40,000	45,000	50,000	40,000	40,000
53	Նույնը ԱՓՏ-ի դեպքում	0	0	0	0	0	0	0	0
54	Միսոցային օղակների փոխարինում	80,000	120,000	80,000	120,000	100,000	120,000	100,000	80,000
55	Նույնը DOHC դեպքում	0	0	0	0	0	0	0	0

56	Նույնը V6-ի դեպքում	0	0	0	0	0	0	0	0
57	Թափանիվի հանում և տեղադրում	3,000	3,000	3,000	3,000	3,000	3,000	3,000	3,000
	2. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ								
58	Յուղի և յուղի զտիչի փոխարինում	0	0	0	0	0	0	0	0
59	Յուղի պոմպի փոխարինում	18,000	25,000	20,000	30,000	30,000	40,000	30,000	20,000
60	Նույնը DOHC դեպքում	0	0	0	0	0	0	0	0
61	Նույնը V6-ի դեպքում	0	0	0	0	0	0	0	0
62	Ղեկավարման բլոկի վերանորոգում	0	0	0	0	0	0	0	0
63	Բռնկման կարգավորում	0	0	0	0	0	0	0	0
64	CO կարգավորում	1,000	1,000	1,000	1,000	1,000	1,000	1,000	1,000
65	Օդի զտիչի փոխարինում	0	0	0	0	0	0	0	0
66	Սրահի զտիչի փոխարինում	2,500	2,500	2,500	2,500	2,500	2,500	2,500	2,500
67	Ինժեկտորի ֆորսունկաների փոխարինում	3,000	3,000	3,000	3,000	3,000	3,000	3,000	3,000
68	Ինժեկտորի ֆորսունկաների մաքրում	2,000	2,000	2,000	2,000	2,000	2,000	2,000	2,000
69	Վառելիքիմղիչի փոխարինում	7,000	10,000	7,000	10,000	10,000	12,000	10,000	8,000
70	Վառելիքի զտիչի փոխարինում	2,000	2,000	2,000	2,000	2,000	2,000	2,000	2,000
71	վառելիքի բաքի հանում և տեղադրում	10,000	10,000	10,000	15,000	10,000	15,000	10,000	10,000
	3. Սառեցման և արտածման համակարգ								
72	Հովհարի փոկի հանում և տեղադրում	3,000	5,000	4,000	5,000	5,000	5,000	40,000	40,000
73	Հովհարի հանում և տեղադրում	7,000	8,000	8,000	10,000	10,000	10,000	10,000	8,000
74	Ռադիատորի հանում և տեղադրում	8,000	10,000	10,000	12,000	12,000	12,000	12,000	10,000
75	Նույնը կոնդիցիոների դեպքում	0	0	0	0	0	0	0	0
76	Նույնը ԱՓՏ-ի դեպքում	0	[redacted]	0	0	0	0	0	0

77	Ռադիատորի վերանորոգում	40,000	40,000	40,000	40,000	40,000	40,000	40,000	40,000
78	Թերմոստատի փոխարինում	5,000	5,000	5,000	5,000	6,000	7,000	6,000	5,000
79	Ջրի պոմպի փոխարինում	8,000	10,000	10,000	10,000	10,000	10,000	10,000	10,000
80	Նույնը DOHC և V-6 դեպքում	0	35,000	30,000	35,000	30,000	35,000	35,000	25,000
81	Նույնը կոնդիցիոների դեպքում	0	0	0	0	0	0	0	0
82	Ջրի պոմպի վերանորոգում	0	0	0	0	0	0	0	0
83	Նույնը DOHC դեպքում	0	0	0	0	0	0	0	0
84	Նույնը կոնդիցիոների դեպքում	0	0	0	0	0	0	0	0
85	Ընդարձակող բաքի փոխարինում	4,000	8,000	5,000	10,000	5,000	10,000	10,000	5,000
86	Խլարարի հանում և տեղադրում	5,000	5,000	5,000	6,000	6,000	7,000	6,000	5,000
87	Նույնը DOHC դեպքում	0	0	0	0	0	0	0	0
88	Ռադիատորի փողրակի հանում և տեղադրում	4,000	5,000	5,000	7,000	5,000	7,000	6,000	5,000
89	Սրահի զտիչի փոխարինում	2,000	2,500	2,000	2,500	2,500	2,500	2,500	2,000
	4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ								
90	Բանվ.կամ գլխ.գլանի հանում և տեղադրում	8,000	10,000	8,000	8,000	10,000	10,000	10,000	8,000
91	Բանվ.կամ գլխ.գլանի վերանորոգում	4,000	5,000	6,000	8,000	8,000	10,000	8,000	8,000
92	Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում	0	0	0	0	0	0	0	0
93	Կցորդման ոտնակի հանում և տեղադրում	0	0	0	0	0	0	0	0
94	Կցորդման ճոպանի հանում և տեղադրում	[redacted]	20,000	[redacted]	[redacted]	[redacted]	[redacted]	20,000	[redacted]
95	ՓՏ-ի հանում և տեղադրում	[redacted]	25,000	[redacted]	25,000	[redacted]	[redacted]	[redacted]	[redacted]
96	ՓՏ-ի վերանորոգում	[redacted]	100,000	[redacted]	100,000	[redacted]	[redacted]	[redacted]	[redacted]
97	ՓՏ-ի առանցքակալի փփոխարինում	[redacted]	25,000	[redacted]	25,000	[redacted]	[redacted]	[redacted]	[redacted]
98	ՓՏ-ի պատյանի հանում և տեղադրում	[redacted]	10	[redacted]	10	[redacted]	[redacted]	[redacted]	[redacted]

99	Վազքաչափի շարժաբեր փոխարինում	1,000	1,000	1,000	1,000	1,000	1,000	1,000	1,000
100	ԱՓՏ-ի կոնվերտերի հանում և տեղադրում	5,000	[redacted]	5,000	5,000	5,000	5,000	5,000	5,000
101	ԱՓՏ-ի տանող սկավառակի փոխարինում	50,000	[redacted]	50,000	50,000	50,000	50,000	50,000	50,000
102	Նույնը V6-ի համար	10	[redacted]	10	10	10	10	10	10
103	ԱՓՏ-ի հանում և տեղադրում	35,000	[redacted]	35,000	45,000	45,000	45,000	35,000	35,000
104	Նույնը V6-ի համար	10	[redacted]	10	10	10	10	10	10
105	ԱՓՏ-ի վերանորոգում	160,000	[redacted]	160,000	250,000	160,000	250,000	160,000	200,000
106	Նույնը V6-ի համար	10	[redacted]	10	10	10	10	10	10
107	ԱՓՏ-ի յուղի զտիչի փոխարինում	12,000	[redacted]	12,000	12,000	12,000	12,000	12,000	12,000
	5.Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ								
108	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում	[redacted]				25,000	0	[redacted]	
109	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում վերանորոգումով	[redacted]				80,000	0	[redacted]	
110	Բաշխիչ տուփի խցուկի փոխարինում	[redacted]				8,000	0	[redacted]	
111	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում	[redacted]			12,000	12,000	15,000	12,000	[redacted]
112	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում,վերանորոգումով	[redacted]			0	0	0	0	[redacted]
113	Կարդանային լիսեռի խաչուկի հանում և տեղադրում	[redacted]			4,000	5,000	5,000	5,000	[redacted]
114	Կարդանային լիսեռի միջանկյալ կախոցի հանում ևտեղադրում	[redacted]			8,000	8,000	8,000	8,000	[redacted]
	6.Առջևի և հետևի կամրջակներ								
115	Առջևի կամ հետևի կամրջակի հանում և տեղադրում	[redacted]			25,000	30,000	30,000	30,000	[redacted]
116	Առջևի կամ հետևի կամրջակի լիակատար քանդում և հավաքում	[redacted]			80,000	80,000	80,000	80,000	[redacted]